ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հայաստանի Հանրապետության
Ազգային Ժողովի նախագահ
Արարատ Միրզոյանին

Հարգելի պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածով, «Ազգային ժողովի կանոնակարգ» Սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-223-Ն Օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1) *Օրենքի նախագիծը*
2) *Օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը*
3) *Գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքը*

Խնդրում ենք վերը նշված օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝ *Արմեն Խաչատրյան*

Սիփան Փաշինյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-223-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգերում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումները»,

2) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքով նախատեսված հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցակացումն ապահովում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումները (այսուհետ՝ օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանում): Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումն ապահովում է միայն ոստիկանության օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների նախաձեռնությամբ, ինչպես նաեւ օրենքով սահմանված հիմքերով կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում այդ ստորաբաժանումներին տրված հանձնարարության կատարման նպատակով իրականացվող հեռախոսային խոսակցության վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը:»,

3) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման անմիջական ղեկավարումն իրականացնում է օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման պետը, որին նշանակում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ներկայացմամբ: Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման ընդհանուր ղեկավարումն իրենց համակարգերում իրականացնում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը:»,

3) 4-րդ մասում «Գլխավոր վարչությունը» բառերը փոխարինել «Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 31-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ոստիկանության կամ» բառերը հանել, իսկ «Գլխավոր վարչության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման» բառերով,

2) 5-րդ մասում «Գլխավոր վարչության» բառերը փոխարինել «Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման» բառերով:

Հոդված 3. Օրենքի 32-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «, ներառյալ՝ ազգային անվտանգության մարմինները,» բառերը,

2) 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը անհապաղ զեկուցում է» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը անհապաղ զեկուցում են» բառերով,

3) 4-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը յուրաքանչյուրն իր համակարգի մասով հաջորդ տարվա հունվարի 31-ից ոչ ուշ Հայաստանի Հանրապետության վարչապետին

տարեկան հաշվետվություն են ներկայացնում, որը պարունակում է նախորդ տարվա ընթացքում՝»,

4) ողջ տեքստում «Գլխավոր վարչություն» բառերը և դրանց բոլոր հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանում» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում վարչապետի կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման պետին նշանակելու օրվան հաջորդող օրը: Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման պետին նշանակելու օրը նշանակման մասին տեղեկատվությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագծի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումն ապահովում է **միայն Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների միջնորդության հիման վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով:**

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գլխավոր վարչությունը հեռահաղորդակցության օպերատորի մոտ ապահովում է համապատասխան օպերատիվ-տեխնիկական անհրաժեշտ պայմաններ՝ սույն օրենքով լիազորված մարմինների կողմից հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու համար:

ՀԽՎ-ն բազմաբովանդակ միջոցառում է, որը ընդգրկում է.

1. հեռախոսային ֆիքսված ցանցի դեպքում՝

- հեռախոսային խոսակցության ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը,

- տվյալ հեռախոսահամարի հետ ուղիղ կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

- տվյալ հեռախոսահամարի հետ անուղղակի (միջնորդավորված) եղանակով կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

- հեռախոսային զանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսահամարի պարզումը, որի վրա փոխանցվել է զանգը.

2. բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝

- հեռախոսային խոսակցության, ներառյալ՝ կարճ հաղորդագրությունների (sms) և ձայնային հաղորդագրությունների ձայնագրումը կամ դրանց բովանդակության այլ ձևով ամրագրումը,

- տվյալ հեռախոսահամարի հետ ուղիղ կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունները սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

- տվյալ հեռախոսահամարի հետ անուղղակի (միջնորդավորված) եղանակով կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունները սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

- հեռախոսային զանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսահամարի պարզումը, որի վրա փոխանցվել է զանգը.

3. ինտերնետային հաղորդակցության, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և ինտերնետի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում հաղորդման ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը, ինչպես նաև տվյալները, որոնց միջոցով կարող են պարզվել՝

- ինտերնետային ցանցին միանալու և ցանցից դուրս գալու աշխարհագրական վայրը, օրը, ժամը և տևողությունը, ներառյալ՝ IP (ինտերնետ պրոտոկոլի) հասցեն,

- ինտերնետն օգտագործողի կամ բաժանորդի անունը և անհատականացման տվյալները (user ID),

- հեռախոսի համարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, ինտերնետային հասցեն, ինտերնետային հեռախոսային զանգն ստացողի անունը կամ այդ անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին յուրաքանչյուր տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել նրա ինքնությունը:

Ոչ ակնհայտ պայմաններում կատարված հանցագործությունների գերակշիռ մեծամասնություն կազմող դեպքերում բացահայտման նպատակով ոստիկանությունը կիրառում է հենց ՀԽՎ օպերատիվ-հետախուզական միջոցառումը:

Գործող օրենսդրությամբ քրեական օրենսգրքի շուրջ 80 տոկոսը կազմող հանցագործությունների բացահայտման նպատակով Ոստիկանությանը վերապահված է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավունք, որոնց անհետաձգելիությունից (հարմարադեպությունից) ու օպերատիվությունից շատ հաճախ կախված է հանցագործության բացահայտման հնարավորությունը: Ընդ որում՝ ՀԽՎ-ի իրականացումը վերապահված է խիստ սահմանափակ մարմինների (ԱԱԾ, Ոստիկանություն, Քրեակատարողական հիմնարկներ):

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի կարգավորումների համաձայն՝ Ոստիկանությունը ՀԽՎ իրականացնելու համար դիմում է Ազգային անվտանգության ծառայությանը, որը նշված օրենքի 31-րդ հոդվածի ուժով պետք է ապահովի օպերատիվ-տեխնիկական պայմաններ, այդ թվում՝ տրամադրի կապի ուղիներ և միջոցներ:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Հաշվի առնելով Ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության ընդգրկուն լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ոստիկանության կառուցվածքում գործում է օպե-ռատիվ-տեխնիկական մասնագիտացված ստորաբաժանում՝ համալրված պրոֆեսիոնալ մասնագետներով (այդ թվում՝ գաղտնի հաստիքային աշխատակիցներով) ու տեխնիկական միջոցներով, առաջարկվում է օրենսդրորեն թույլատրելի դարձնել Ոստիկանության կողմից ՀԽՎ-ի ինքնուրույն իրականացումը սեփական օպերատիվ-տեխնիկական ենթակառուցվածքներով, որոնց զարգացման ուղղությամբ պետք է ներկայացվի միջոցառումների պլան:

Բացի այդ, կխնայվի ԱԱԾ-ին միջնորդությամբ դիմելու և տեխնիկական աջակցություն ստանալու ու կազմակերպչական հարցերի լուծման համար ծախսվող ժամանակը:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքն ընդունելիս ԱԱԾ-ի կազմում հատուկ օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանում ստեղծելու անհրաժեշտությունը առավելապես հիմնավորվել է Ոստիկանության կողմից ՀԽՎ

իրականացնելիս հնարավոր չարաշահումները կանխարգելելու փաստարկով: Ի դեպ, գործող օրենքով օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողության (վերահսկողություն) իրականացնելու սուբյեկտներն են դատախազությունը և դատարանները, իսկ գերատեսչական ակտերով՝ ՕՀԳ իրականացնող մարմինների համար՝ նրանց վերադասը:

Գործող օրենսդրությունը ՀԽՎ իրականացնող մարմնի գործունեության նկատմամբ օրինականության հսկողություն վերապահել է նաև գործադիր իշխանության ղեկավարին, մասնավորապես՝ ԱԱԾ համակարգում գործող գլխավոր վարչության ղեկավարին նշանակում է վարչապետը՝ ԱԱԾ տնօրենի ներկայացմամբ: Նման երաշխիքը բավականին արդյունավետ է, քանի որ նվազագույնի է հասցնում «նեղ գերատեսչական» շահագրգռություններով օպերատիվ-տեխ-նիկական ստորաբաժանման պետի ազատությունը սահմանափակելու հնարավորությունը: Հարաբերական անկախության նման երաշխիքը առաջարկվում է գործադրել նաև ոստիկանության պարագայում:

Ե՛վ Ազգային անվտանգության մարմիններին և՛ Ոստիկանությանը (ՆԳ մարմիններին) զուգահեռաբար ՀԽՎ իրականացնելն ապահովելու իրավասությունը վերապահված է ԱՊՀ մի շարք երկրների օրենսդրությամբ, ինչպես օրինակ՝ ՌԴ, Բելառուս, Տաջիկստան, Ուկրաինա:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արմեն Խաչատրյանի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Ոստիկանության կողմից սեփական օպերատիվ-տեխնիկական ենթակառուցվածքներով ՀԽՎ-ի ինքնուրույն իրականացման դեպքում կխնայվի ԱԱԾ-ին միջնորդությամբ դիմելու, տեխ-նի-կական աջակցություն ստանալու և կազմակերպչական հարցերի լուծման համար ծախսվող ժա-մանակը, հատկապես անհետաձգելի դեպքերում, կբարձրանա հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ–հետախուզական միջոցառման արդյունավե-

տությունը, ինչը կնպաստի հանցագործությունների առավել արագ, օպերատիվ բացահայտմանը, կերաշխա-վորվի մարդու անձնական կյանքին միջամտության որոշակիությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 9. ~~Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը~~

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգերում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումները»

~~1. Սույն օրենքով նախատեսված հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումն ապահովում է միայն Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների միջնորդության հիման վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով:~~

~~2. Գլխավոր վարչության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը: Գլխավոր վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Գլխավոր վարչության պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարի ներկայացմամբ: Գլխավոր վարչության պետի պաշտոնն ազգային անվտանգության մարմիններում ծառայողների գլխավոր խմբի պաշտոն է:~~

«1. Սույն օրենքով նախատեսված հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցակացումն ապահովում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումները (այսուհետ՝ Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանում):

Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումը ապահովում է միայն ոստիկանության օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների նախաձեռնությամբ, ինչպես նաև օրենքով սահմանված հիմքերով կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում այդ ստորաբաժանումներին տրված հանձնարարության կատարման նպատակով իրականացվող հեռախոսային խոսակցության վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը:»

«2. Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման անմիջական ղեկավարումն իրականացնում է Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման պետը, որին նշանակում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ համապատասխա-նաբար Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ներկայացմամբ:

Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման ընդհանուր ղեկավարումն իրենց համակարգերում իրականացնում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը:»:

3. (մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-270-Ն)

4. ~~Գլխավոր վարչությունը~~ *Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումը* հեռահաղորդակցության օպերատորի մոտ ապահովում է համապատասխան օպերատիվ-տեխնիկական անհրաժեշտ պայմաններ՝ սույն օրենքով լիազորված մարմինների կողմից հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու համար:

Հոդված 31. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը ~~ոստիկանության կամ~~ քրեակատարողական ծառայության մարմինների կողմից անցկացվում է՝ ~~Գլխավոր վարչության~~ *Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության օպերատիվ-տեխնիկական*

ստորաբաժանման կողմից օպերատիվ-տեխնիկական պայմաններ ստեղծելով, այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, ոստիկանության կամ քրեակատարողական ծառայության մարմինների կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ, ընդ որում՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների և ~~Գլխավոր վարչության~~ ***Ազգային անվտանգության ծառայության օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման*** կողմից այդ տվյալների, տեղեկատվության և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:

2. Ինտերնետային ցանցով փոխանցվող հաղորդումների, միջազգային նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը ոստիկանության, ռազմական ոստիկանության կամ քրեակատարողական ծառայության մարմինների կողմից անցկացվում է՝ ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-տեխնիկական պայմաններ ստեղծելով, այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, ոստիկանության, ռազմական ոստիկանության կամ քրեակատարողական ծառայության մարմինների կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ, ընդ որում՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների կողմից այդ տվյալների, տեղեկատվության և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:

3. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը, բացառությամբ միջազգային նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների փոխանցման, ոստիկանությունը, ռազմական ոստիկանությունը և քրեակատարողական ծառայության մարմիններն իրավունք ունեն անցկացնելու ինչպես ինքնուրույն, այնպես էլ ազգային անվտանգության մարմինների կողմից կապի միջոցների տրամադրումով՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

5. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելիս հեռահաղորդակցության և փոստային կապի կազմակերպությունները պարտավոր են ~~Գլխավոր վարչության~~ ***Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման*** պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմաններ:

6. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված օպերատիվ- հետա-խուզական միջոցառումներ անցկացնելիս հեռահաղորդակցության և փոստային կապի կազմա-կերպությունները պարտավոր են ազգային անվտանգության մարմինների, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում ոստիկանության, ռազմական ոստիկանու-թյան և քրեակատարողական ծառայության մարմինների պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմաններ:

7. Արգելվում է անցկացնել սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված օպերատիվ միջոցառումները, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ միջոցառումը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ: Անհապաղ ոչնչացման են ենթակա սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման նպատակից անկախ պատճառով ստացված փաստաբա-նական գաղտնիք պարունակող տեղեկությունները:

Հոդված 32. Հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ընթացակարգը

1. Հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինները, ~~ներառյալ՝ ազգային անվտանգության մարմինները~~, հեռախոսային խոսակցության վերահսկում իրականացնելու նպատակով ~~Գլխավոր վարչություն~~ ***Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանում*** են ներկայացնում դատարանի որոշման քաղվածքը, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին օպերատիվ- հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշումը: Քաղվածքը տրվում է դատարանի կողմից՝ նշված

օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ որոշման հետ միաժամանակ, և այն պետք է պարունակի միայն վերահսկման ենթակա հեռախոսահամարը:

2. Այն դեպքերում, եթե սույն հոդվածով օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, ապա ~~Գլխավոր վարչությունը~~ ***Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումը*** սույն հոդվածով նախատեսված կարգով ապահովում է այդ միջոցառումների իրականացումը, սակայն այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միջնորդությամբ ~~Գլխավոր վարչությանը~~ ***Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանմանը*** դիմած մարմինը պարտավոր է 48 ժամվա ընթացքում ~~Գլխավոր վարչություն~~ ***Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանում*** ներկայացնել դրանց իրականացումը թույլատրելու կամ չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ 48 ժամվա ընթացքում դատարանի թույլտվությունը չներկայացնելու կամ սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը ~~Գլխավոր վարչություն~~ ***Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանում*** ներկայացնելու դեպքում դրանց անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ արդեն ձեռք բերված տեղեկությունները և նյութերը միջոցառումն իրականացնող մարմնի կողմից ենթակա են անհապաղ ոչնչացման: Սույն մասով նախատեսված յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ ~~Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը անհապաղ զեկուցում է~~ ***Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը անհապաղ զեկուցում են*** Հայաստանի Հանրապետության վարչապետին:

4. ~~Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման իրավասություն ունեցող յուրաքանչյուր մարմնի կտրվածքով հաջորդ տարվա հունվարի 31-ից ոչ ուշ Հայաստանի Հանրապետության վարչապետին տարեկան հաշվետվություն է ներկայացնում, որը պարունակում է նախորդ տարվա ընթացքում՝~~

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը յուրաքանչյուրն իր համակարգի

մասով հաջորդ տարվա հունվարի 31-ից ոչ ուշ Հայաստանի Հանրապետության վարչապետին տարեկան հաշվետվություն են ներկայացնում, որը պարունակում է նախորդ տարվա ընթացքում՝»

1) սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ ~~Գլխավոր վարչություն~~ ***Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանում*** ներկայացրած միջնորդությունների ընդհանուր թվաքանակը.

2) այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, և հետագայում քաղվածքը չի ներկայացվել.

3) այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, իսկ դատարանը հետագայում իր որոշմամբ չի թույլատրել նման օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը: